



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր Է. Նահապետյան

Վարչական գործ թիվ 475/0022/05/14

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«11» նոյեմբերի 2014թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝
վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

Նախագահող դատավոր Քրիստինե Մկոյան,
դատավոր Արթուր Առաքելյան,
դատավոր Գալուստ Ղարիբյան,

Մասնակցությամբ՝
երրորդ անձի ներկայացուցիչներ Անահիտ Սուվարյանի,
Ֆռռնգ Մովսիսյանի,

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Սուսաննա Ներսեսի Այվազյանի
ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի, երրորդ անձ Շիրակի մարզպետարան՝ վարչական
վարույթ իրականացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ 475/0022/05/14
վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 02.06.2014
թվականի վճռի դեմ Գյումրու քաղաքապետարանի կողմից ներկայացված վերաքննիչ
բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

23.01.2014 թվականին Սուսաննա Ներսեսի Այվազյանը հայցադիմում է ներկայացրել
Հայաստանի Հանրապետության վարչական դատարան /այսուհետ նաև՝ Դատարան/
ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի, երրորդ անձ Շիրակի մարզպետարան՝ վարչական
վարույթ իրականացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (դատավոր Է. Նահա-
պետյան) 29.01.2014թ. հայցադիմումն ընդունել է վարույթ:

11.04.2014 թվականին Շիրակի մարզի Գյումրու համայնքի ներկայացուցիչ Լուսինա
Տեր-Գևորգյանը ներկայացրել է միջնորդություն՝ Շիրակի մարզպետարանին որպես
երկրորդ պատասխանող ներգրավելու մասին, որը Դատարանի 11.04.2014 թվականի
որոշմամբ մերժվել է:

15.04.2014 թվականին Շիրակի մարզի Գյումրի համայնքը /ներկայացուցիչ Լուսինա
Տեր-Գևորգյան/ ներկայացրել է միջնորդություն՝ Շիրակի մարզպետարանին երրորդ անձ
ներգրավելու մասին, որը Դատարանի 15.04.2014 թվականի որոշմամբ բավարարվել է:

